№ 248 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30 1900 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30 № 248

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1901** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վաղը, կիրակի, ամսոյս 31-ին,

ՅԱԿՈՎԲ ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը ս. Աւետեաց Ջգրաշէն եկեղեցում կը կատարվի հոգեհանդիստ, որի մասին հանդուցեալի մայրը եւ ամուսինը յայտնում են ի գիտութիւն ազգականների, ծանօթների եւ ընկերների։ Պատարագի սկիզբն է ժամը 10-ին, հոգեհանգիստը 11½-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջացաւ տարին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազնուականի յիշատակարանից.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶՆՈՒԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Որ ես ամուրի ծերացայ, մեղաւորը մի ոչխար է, այո, ոչխար, մի մեծ զոչ։

Կարմրում եմ, երբ մտաբերում եմ, որ մի յիմար անասուն խանգարեց ինձ ամուսնանալու եւ այսպէս անհամ, անշնորհք պառաւեցի։

Մեր գիւղում առաջին մարդն էի թէ իբրեւ հարուստ-կալուածատէր եւ թէ ազնուական ու քաղաքակրթված։ Բոյրս ու մի քանի մօտիկ ազգականներս քաղաքումն էին ապրում եւ նրանք ինձ համար մի լաւ հարսնացու էին ընտրել։ Գրում էին ինձ՝ «հարուստ վաճառականի աղջիկ է, գեղեցկուհի, լաւ դաստիարակված է, տասնեւութ տարեկան է» եւ այլն։ Ինձ մնում էր ուրախանալ եւ համաձայնվել։ Արդէն գրել էի քրոջս, որ նշան տայ եւ ես էլ գործերս կարգի բերելուց յետոյ կը ճանապարհվեմ։

Տասնեւութ տարեկան օրիորդը, ի հարկէ, լաւ կը լինի, մտածում էի ես, ուրեմն աւելորդ էր վաղօրօք տեսնել, ինչպէս սովորաբար ընդունված է։ Բայց ինչ, դիտաւորութիւնս միանգամայն ոչնչացաւ, ազգականներիս աշխատանքն էլ իզուր կորաւ եւ որ գլխաւորն է՝ որքան թուք ու մուր կերայ։

Մեր գիւղում, իմ փառաւոր տանից ոչ շատ հեռու, բնակվում էր չինական Դաւիթը, իմ վաղեմի ճորտը։ Նա ունէր մի շատ սիրուն աղջիկ, որ նշանադրված էր նոյն գիւղի քահանայի որդու հետ։ Այդ երիտասարդը գիւղացիների մէջ առաջնակարգ եւ աչքի ընկնող անձնաւորութիւն էր։ Ես նրան արհամարհում էի, նա ինձ ատում էր։ Մեր մէջ հողային վէճ կար։ Պէտք չէ ուրանալ, խելօք ու աշխատասէր աղջիկ էր։ Ո՞վ է տեսել քահանայի որդի խելօք, սակայն նա երեւի բացառութիւն էր կազմում։

Մի օր թունդ խօսակցութիւն ունեցայ Վասօի հետ (այսպէս էին կանչում նրան) եւ նրա կոպիտ վարմունքի համար սպառնացի վրէժխնդիր լինել։

—Գնա ձեր հաւերին վախեցրու, ծաղրելով պատասխանեց նա։

Առանց երկար մտածելու միտքս դրի նրա նշանածին մի կերպ գրկել ու հաւրուրել։ Սրբանից մեծ անպատուութիւն ու պատիժ անկարող էի նրան հասցնել։ Ասենք, վէճից առաջ էլ մտադիր էի այդ սիրուն աղջկայ այտերից առաջին համբոյրը քաղել։

Քանի հանդիպում էի, թէեւ շատ սակաւ էր պատահում այդ, մի-մի սիրային ակնարկ էի ուղղում նրա հասցէին եւ նա իսկոյն ընկվում, կարմրում էր։ Անկասկած դուր էր գալիս իրան այդ, բայց ամօթխածութիւնից ստիպված ծածկում էր ինձանից։ Եւ անբնական կը լինէր ուրիշ կերպ ենթադրել, որովհետեւ գեղջկուհիների աչքում ազնուականը կատարեալ արարած է մարդկային ցեղի մէջ։ Ուրեմն կասկած չը կար, որ եթէ յարմար բօպէ պատահէր եւ ես նրան գրկիս մէջ առնէի, ինքն իրան երջանիկ պէտք է համարէր։

Յամենայն դէպս, ամեն տեսակ տարակուսանքներից ազատ լինելու համար, մի անգամ, երբ նա իրանց բակում կուտ էր շաղ տալիս հաւերի համար, շտապով անցայ նրա մօտով եւ կիսաձայն արտասանեցի՝ «աղջիկ, համբուրելու եմ քեզ, չը խրտնես»։

Թէեւ չը տեսայ թէ ինչ տպաւորութիւն գործեցին նրա վրա խօսքերս, սակայն համոզված էի, որ նրան մեծ զուարճութիւն պատճառեցին։

Բայց մի շատ դժուար խնդիր կար։ Ո՞րտեղ պէտք է ճանկէի նրան։ Գիշեր ցերեկ տանն էին պահում եւ թոյլ չէին տալիս բակից հեռանալու։ Նոյն իսկ արգելել էին դրացի ընկերուհիներին այցելելու։ Այսպէս էր պատուիրել փեսացուն։ Հարսանիքը բնականաբար այգեքաղից յետոյ պէտք է լինէր եւ այդ էլ հեռու չէր։ Ուրեմն պէտք է շտապէի։ Շատ էի մտածում, զանազան խորամանկ նախագծեր էի կազմում, բայց բոլորն էլ անաջող։

Մի քանի անգամ փորձեցի խորհրդակցել Թիկնապահիս հետ, այն ազնիւ ու հաւատարիմ ծերունու հետ, որի ձեռքին մեծացել էի,—բայց դարձեալ իզուր։ Նա այնպիսի խակ խակ ու վայրենի միջոցներ էր առաջարկում, որ ստիպվում էի զայրանալ, նոյն իսկ հայհոյել։ Մի անգամ էլ փորձ փորձեցի հանաքի ձեւով մեր անտեսուհի պառաւ Մարիամից խորհուրդ հարցնել։ Նա փոխանակ ինձ պատասխանելու՝ անէծք ու հայհոյանք էր, որ ուղղեց աղջկայ հասցէին։

—Ախար նա ինչ մեղաւոր է, այ, պառաւ, հարցրի ես.—ինչ վնաս է տուել ձեզ։

Մարիամը լսել անգամ չէր սիրում։ Աղջկան մեղաւոր, սրտալի հայհոյելուց յետոյ անցաւ նրա ծնողներին, պապին ու տատին։ Քանի ես ծիծաղում էի, այնքան նա զայրանում էր։ Որքան փոշմանեցի այդպիսի թեթեւամտութեանս համար։ Պառաւը այդ բոլորից վերջը գնացել էր Դաւիթի տունը եւ չը գիտեմ ինչ պատրուակով ահագին զալմաղալ գցել։

Անցնում էին օրեր, ուրեմն ժամանակ կորցնել չէր կարելի, մի կերպ պէտք է վերջացնէի այս բանը, որ անհրաժեշտ էր ինձ։ Զէ՞ որ մի ուժեղ զէնք էր հարկաւոր ձեռք բերել Վասօի լեզուն ընդմիշտ կարճացնելու համար։ Կատարելապէս համոզվեցի, որ մարդու հետ խորհրդակցել աւելորդ է, նոյն իսկ վնասակար։ Պէտք է ինքս սեփական խելքով վճռէի այսպէս թէ այնպէս։ Վերջապէս որոշեցի դիմել մի յանդուգն քայլի։ Այս տեսակ քայլը առաջինը եւ վերջինը եղաւ երկար կեանքիս մէջ։

—

Սեպտեմբերի մութ ու մառախլապատ գիշերներից մէկն էր։ Իսկապէս ժամի 8-ն էր, բայց, ինչպէս յայտնի է, գիւղում գիշերը շուտ է սկսվում։ Թէեւ Թիկնապահիս հետ միասին արդէն տեսել էինք պատրաստութիւն, այնուամենայնիւ, դարձեալ յիշեցրի նրան շատ ոսկորներ հաւաքել։

Այդ բանը անհրաժեշտ էր Դաւիթի շանը կաշառելու համար։ Նա իր բակում այնպիսի մի դամիա էր պահում, որի լոկ տեսքից անգամ կարելի էր սարսափել։ Եթէ ինձ աջողվեր այդ երկիւղալի պահապանին գրաւել՝ նպատակիս հասած պէտք է համարէի։ Ծառաս ինձ համոզեց, որ ամեն տեսակ շանը կարելի է ճողոպի ծրագիրներով։ Զէնքի շառաչիւնը ընդհանուր հետաքրքրութեան առարկայ էր դարձել։ Զինաթափութեան ծրագիրները մոռացվել էին և եւրոպական պարլամենտները նոր և նոր կրեդիտներ էին բաց թողնում զինվելու և պատերազմական պատրաստութիւնների համար։

Հարաւային Աֆրիկայում պատերազմը շարունակվում էր բօէրների հերոսական ջանքերի անպատմելի սխրագործութիւններով։ Բայց բաղդը արդէն որոշված էր։ Ոչ ոք չը վստահացաւ պաշտպան հանդիսանալ հերոս ժողովրդին և նա ուժաթափ իր վերջին ոյժերն է սպառում մի անգամ ևս ձիչ արձակելու և ապա ընկճվելու։

Չինական պատերազմը ցոյց տուեց, որ Եւրոպան գիտէ համերաշխութիւն պահպանել միայն մի դէպքում, որտեղ ընդհանուր շահեր կան պաշտպանելու։ Եւ եթէ Չինաստանը մաս մաս չեղաւ և չը կործանվեց, այդ այն պատճառով էր, որ նրա բաժանումը կառաջացներ մի շարք կրնճռոտ հարցեր։

Գերմանիան կարողացաւ սերտ կերպով մօտենալ Անգլիային և ուժեղացնել իր ազդեցութիւնը Թիւրքիայում, որտեղ ձեռք բերեց Միջագէտքում երկաթուղիներ անցկացնելու արտօնութիւններ։

Ռուսաստանը նշանաւոր ազդեցութիւն ձեռք բերեց Պարսկաստանում և սկիզբ դրեց առևտրական և արդիւնագործական դաշնակցութեան։

Միայն մի խոշոր իրողութիւն կրում էր զուտ կուլտուրական և քաղաքակրթական կերպարանք—դա Պարիզի ցուցահանդէսն էր, որ գրաւել էր բոլոր աշխարհի արդիւնքները՝ գաղափար տալու այն առաջադիմութեան մասին, որ արել է մեր երկրագունդը քսաներորդ դարի շէմքում։

Դալով այն ներքին հարցերին, որոնցով զբաղված էինք մենք տարվայ ընթացքում, կանգ կառնենք նշանաւոր կէտերի վրա։

Մեր հասարակութիւնը մեծ ուշադրութեամբ և կարեկցութեամբ հետևում էր Ախալքալաքի գաւառի այն ազգաբնակութեան վիճակին, որ վնասվեց երկրաշարժի աւերիչ ցնցումներից։ Հասարակութիւնը ջերմ սրտով վերաբերվեց դէպի թշուառները և տուեց առատ նուէրներ։

Մեր երկրի հաղորդակցութեան ճանապարհների հարցը մի քայլ առաջ գնաց։ Պաշտօնապէս բացվեցին Բաղուից դէպի Մոսկվա գնացող երկաթուղին, Թիֆլիսից դէպի Կարս գնացող երկաթուղին և արագ սկսվեց շինվել Երևանի երկաթուղին։ Բացի այդ շինվեց նաւթանցք Բաթումի և Միխայլովսկայա կայարանների մէջ, որով թեթեւացաւ Անդրկովկասեան երկաթուղու վրա ծանրացած գործը։

Մեր երկրի գիւղական հողատիրութեան վերաբերութեամբ հրատարակվեց մայիսի 1-ի նշանաւոր օրէնքը, որով պէտք է կանոնաւորվի մեր երկրի ազգաբնակութեան կենսական ամենախոշոր հարցերից մէկը։ Սկզբունքի տեսակէտից կարևոր նշանակութիւն ունի և հարկաւորութեան նոր օրէնքը, որ մոցրեց եկամտային հարկի սիստեմը։

Հայ հասարակութեանը առանձնապէս շատ հետաքրքրել էին եկեղեցական-դպրոցական ընտրութիւնների, երէցփոխանական հաշուետուութեան, քահանայական ռոճիկ հաստատելու, եկեղեցական կալուածքների բարեկարգութեան և մի շարք ուրիշ խնդիրներ, որոնք կապված էին մեր հոգևոր իշխանութեան յանձնված գործերի հետ։ Տխուր երևոյթները ծանր տպաւորութիւն էին գործում հասարակութեան վրա և ցոյց էին տալիս բարենորոգչական գործունէութեան այն մեծ անհրաժեշտութիւնը, որի մասին խօսել է «Մշակ» լրագիրը իր գոյութեան ամբողջ ընթացքում։

Մեր լրագիրը կարողացաւ այս տարի մի առանձին ոյժով մերկացնել մեր գաւառների արիւնը քամող վաշխառուների և տզրուկների արարքը և նպաստել կազմակերպելու գաւառների մէջ զսպող և մաքարող հասարակական կարծիք։

Մեր երկիրը այս տարի ևս ունեցաւ հետազօտողներ։ Պրոֆեսոր Մուշկետով հետազօտեց երկրաշարժի պատճառները։ Պրոֆեսոր Դոկուչաեվ հետազօտեց Անդրկովկասի հողերի յատկութիւնը։ Մի քանի գիտնականներ ժողովեցին բուսաբանական և հանքաբանական հետաքրքիր տեղեկութիւններ։

Բայց մեծ գործը մնում է դեռ առաջիանքներից ազատ լինելու համար, մի անգամ, երբ նա իրանց բակում կուտ էր շաղ տալիս հաւերի համար, շտապով անցայ նրա մօտով եւ կիսաձայն արտասանեցի՝ «աղջիկ, համբուրելու եմ քեզ, չը խրտնես»։

Թէեւ չը տեսայ թէ ինչ տպաւորութիւն գործեցին նրա վրա խօսքերս, սակայն համոզված էի, որ նրան մեծ զուարճութիւն պատճառեցին։

Բայց մի շատ դժուար խնդիր կար։ Ո՞րտեղ պէտք է ճանկէի նրան։ Գիշեր ցերեկ տանն էին պահում եւ թոյլ չէին տալիս բակից հեռանալու։ Նոյն իսկ արգելել էին դրացի ընկերուհիներին այցելելու։ Այսպէս էր պատուիրել փեսացուն։ Հարսանիքը բնականաբար այգեքաղից յետոյ պէտք է լինէր եւ այդ էլ հեռու չէր։ Ուրեմն պէտք է շտապէի։ Շատ էի մտածում, զանազան խորամանկ նախագծեր էի կազմում, բայց բոլորն էլ անաջող։

Մի քանի անգամ փորձեցի խորհրդակցել Թիկնապահիս հետ, այն ազնիւ ու հաւատարիմ ծերունու հետ, որի ձեռքին մեծացել էի,—բայց դարձեալ իզուր։ Նա այնպիսի խակ խակ ու վայրենի միջոցներ էր առաջարկում, որ ստիպվում էի զայրանալ, նոյն իսկ հայհոյել։ Մի անգամ էլ փորձ փորձեցի հանաքի ձեւով մեր անտեսուհի պառաւ Մարիամից խորհուրդ հարցնել։ Նա փոխանակ ինձ պատասխանելու՝ անէծք ու հայհոյանք էր, որ ուղղեց աղջկայ հասցէին։

—Ախար նա ինչ մեղաւոր է, այ, պառաւ, հարցրի ես.—ինչ վնաս է տուել ձեզ։

Մարիամը լսել անգամ չէր սիրում։ Աղջկան մեղաւոր, սրտալի հայհոյելուց յետոյ անցաւ նրա ծնողներին, պապին ու տատին։ Քանի ես ծիծաղում էի, այնքան նա զայրանում էր։ Որքան փոշմանեցի այդպիսի թեթեւամտութեանս համար։ Պառաւը այդ բոլորից վերջը գնացել էր Դաւիթի տունը եւ չը գիտեմ ինչ պատրուակով ահագին զալմաղալ գցել։

Անցնում էին օրեր, ուրեմն ժամանակ կորցնել չէր կարելի, մի կերպ պէտք է վերջացնէի այս բանը, որ անհրաժեշտ էր ինձ։ Զէ՞ որ մի ուժեղ զէնք էր հարկաւոր ձեռք բերել Վասօի լեզուն ընդմիշտ կարճացնելու համար։ Կատարելապէս համոզվեցի, որ մարդու հետ խորհրդակցել աւելորդ է, նոյն իսկ վնասակար։ Պէտք է ինքս սեփական խելքով վճռէի այսպէս թէ այնպէս։ Վերջապէս որոշեցի դիմել մի յանդուգն քայլի։ Այս տեսակ քայլը առաջինը եւ վերջինը եղաւ երկար կեանքիս մէջ։

—

Սեպտեմբերի մութ ու մառախլապատ գիշերներից մէկն էր։ Իսկապէս ժամի 8-ն էր, բայց, ինչպէս յայտնի է, գիւղում գիշերը շուտ է սկսվում։ Թէեւ Թիկնապահիս հետ միասին արդէն տեսել էինք պատրաստութիւն, այնուամենայնիւ, դարձեալ յիշեցրի նրան շատ ոսկորներ հաւաքել։

Այդ բանը անհրաժեշտ էր Դաւիթի շանը կաշառելու համար։ Նա իր բակում այնպիսի մի դամիա էր պահում, որի լոկ տեսքից անգամ կարելի էր սարսափել։ Եթէ ինձ աջողվեր այդ երկիւղալի պահապանին գրաւել՝ նպատակիս հասած պէտք է համարէի։ Ծառաս ինձ համոզեց, որ ամեն տեսակ շանը կարելի է

կայում։ Քսաներորդ դարը, որի շեմքում կանգնած ենք, մեզնից կը սանայ ոչ այնքան արած գործեր, որքան կարիքների մասին խորհրդածութիւններ։ Ճանապարհ գցենք՝ 1900 թուականը ուրեմն նոր աշխատանքին ձեռք մեկնելու համար։

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXX

Հին տարին փչում է իր վերջին շունչը, մոռացված, արհամարհված ամենքից, ինչպէս մի անտէր աղքատ, որ չունի կողքին մի մտերիմ ձեռք, որ փակէր նրա աչքերը։

Եւ սակայն՝ այդ մեռնող տարին տանում է իր հետ, ինչպէս ասում են, յաւիտենութեան գիրկը մի կատար մեր կեանքից, մի մաս մեր «ես»-ից, մեր զգացմունքներից, մեր իղձերից, մեր մտածմունքներից, մեր երազներից...

Թերեւս աւելի պատուաւոր յուղարկաւորութեան էր նա արժանի։ Բայց մենք ժամանակ չունենք նրանով զբաղվելու, մենք շտապում ենք ընդառաջ նոր տարուն, մենք ուզում ենք անպատճառ մի որ եւ է բանով նշանաւոր դարձնել նոր տարու ընդունելութիւնը։

Է՜հ, ինչ արած, թող այդպէս լինի։ Բայց գոնէ ընդունէինք նոր տարին, ինչպէս պէտքն է, գոնէ նշանաւոր դարձնէինք նրան մի այսպիսի բանով, որ բացի կեր ու խումից, պարից, աղմուկից, իր մէջ պարունակէր եւ մի իմաստ։

Երբ երեխային ասում են, թէ կաղանդ է եւ մրգեր են տալիս նրան ու նա ցնծում է, երբ նրան ասում են՝ նոր տարի է եւ մի տիկնիկ են ընծայում նրան ու նա հրճվում է,—այդ հասկանալի է, բայց երբ մեծ մարդիկ իրար գլխով են դիպչում, այցելութիւններ են անում իրար, շնորհաւորութիւններ են ուղարկում, մի քիչ աւելի են ուտում, մի քիչ աւելի խմում, մի քիչ աւելի պարում, եւ կարծում են, թէ ինչ որ նշանաւոր փոփոխութիւն է կատարվել իրանց կեանքում,—այդ, համաձայնեցէք, շատ տարօրինակ է։

Մեծ մարդկանցից, որոնք բարձրից են նայում երեխաների տիկնիկների վրա, կարելի էր սպասել աւելի լուրջ բան։ Կարելի էր սպասել, որ բացի շատ հասկանալի ցանկութիւնից մի քիչ զուարճանալ, մի քիչ անհոգ ժամանակ անցնել, նրանք այդ օրը, որ այնքան նշանաւոր են համարում իրանք, պահանջ կը զգան կատարել մի բան, որ յիշատակ թողնէր ամբողջ տարվայ ընթացքում։

Եւ ահա այդ բանը, որ կարելի էր սպասել եւ որ աւելի հասկանալի է, չէ լինում,—ինչպէս առհասարակ մարդկանց կեանքում աւելի յաճախ լինում են այնպիսի բաներ, որոնք առողջ դատողութեան տեսակէտից անհասկանալի են,—եւ մարդիկ սովորաբար տօնում են նոր տարին այնպէս, ինչպէս յայտնի անեկդոտի ուսանողները, որոնք հաւալսարանի հիմնադրութեան տարեդարձի օրը ոչինչ չէին գտել հեռագրելու Շչեդրինին, քան՝ «Շնորհաւորում ենք։ Ամեն տարի էրմիտաժում ընթրող ուսանողներ», եւ որոնց Շչեդրինը պատասխանել էր իր սովորական իմաստով՝ «Շնորհակալ եմ։ Ամեն օր ճաշող Շչեդրին»։

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, դեկտեմբերի 29-ին

Գոյութեան կուի մէջ իւրաքանչիւր մարդ մի ճանապարհով աշխատում է վաստակել իր ապրուստը. ոմանք մեծ հարստութիւնների են ձգտում՝ միջոցների մէջ խտրութիւն չը դնելով, ոմանք միջոցների մէջ խտրութիւն անելով՝ հալալ աշխատանքով ձեռք են բերում իրանց ընտանիքը ապրեցնելու համար ամսականը։

Այս վերջին կարգին է պատկանում իմ ամուսինը, որ ամենայն բարեխղճութեամբ կատարում է Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան գրասենեակում գլխաւոր հաշապահի պաշտօնը։

Ցիշեալ ընկերութեան դիրեկտորներից մէկը բաւական ժամանակ է, որ խէթ աչքով էր նայում իմ ամուսնու վրա, որովհետեւ ամուսինս հաշիւը իստակ պահել է սիրում եւ չէ կամենում իր անունը, իբրեւ մարդ եւ հաշապահ, արատաւորել։

Վերջին օրերս Խոսրով Արզումանեան, ձեռքին Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան վերաբերեալ՝ Ծովհաննեան առեւտրական անից ստացած մի չէկ թուով մէկ տարի եւ կէս սրանից առաջ, առաջարկում է իմ ամուսնուն մտցնել գրքում յետին թուով. ամուսինս չէ կամենում զեղծման մասնակից լինել, առարկելով, որ անազնիւ գործ չէ կարող կատարել, կեղտոտել հաշապահական գրքերը եւ իր անունը... Այսօր ստանում եմ, այսօրվայ թուով էլ կարող եմ նշանակել, ասում է նա։

Պ. Արզումանեանը չէ համաձայնվում։ Դրա հետեւանքն այն եղաւ, որ հետեւեալ օրը իմ ամուսնուն ես գտայ քաղաքային հիւանդանոցում պառկած արնաթաթախ գլխով եւ աջ կուռը կտրտած (միսը կարծես թէ խորովելու համար էր կտրտած) արնաքամ եւ ուժասպառ։ Եւ այդ ամենն արել է պ. Արզումանեանցը։

Այս է ուրեմն ազնուութեամբ եւ բարեխղճաբար իր պաշտօնը կատարող ընտանիքի հօր վարձատրութիւնը տօներին։

Տիկ. Յակոբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր հրատարակում ենք «Մշակի» 1900 թուականի վերջին համարը։ Առաջիկայ տարվայ առաջին համարը լոյս կը տեսնէ երկուշաբթի օր, յունվարի 1-ին եւ կուղարկվի միայն այն բաժանորդներին, որոնք գրվել են մեր լրագրին մինչեւ այդ օրը։

—

Վիրաբոյժների համառուսական ժողովը կը բացվի դեկտեմբերի 18-ին, առաւօտեան 9 ժամին, Դօկտորսկի անուանված կլուբում։ Ժողովը կը շարունակվի երեք օր։ Ժողովին մասնակցելու համար արդէն գրվել են 140 մարդիկ։

—

Մեր աշխատակից Լէօի «Հայկական Տպագրութիւն» աշխատութիւնը, որ մաս-մաս տպագրվում էր «Մշակի» մէջ, այս երկու օրը լոյս կը տեսնէ առանձին գրքով։

—

«Правит. Вѣстникъ»-ում հրատարակված է արդարադատութեան մինիստրի ընդարձակ շրջաբերականը։ Համառօտ կերպով հաղորդում ենք նրա վերջաբանը, որի մէջ խօսվում է քրէական դատարանի վերաբերմունքի մասին դէպի մտաւոր անձանց իրաւունքները եւ շահերը։ Որովհետեւ աւելի կամ պակաս չափով դատարանի ձեռքումն են գտնվում մարդու ամենաառաջնակարգ շահերը—նրա քաղաքացիական իրաւունքները, ազատութիւնը, պատիւը եւ ստացուածքը—ուստի նրանց հետ զգուշութեամբ եւ հոգայողութեամբ վարվելը կազմում է դատարանի ամենաառաջին պարտաւորութիւններից մէկը։ Այդ պարտաւորութիւնը խորապէս խախտվում է ամեն մի փաստով, ամեն մի վարմունքով, որի մէջ կարելի է տեսնել անարդանք կամ արհամարհանք դէպի մարդկային անձնաւորութիւնը, չը խօսելով արդէն վիրաւորական եւ խիստ վերաբերմունքի կամ ծաղրի ու ծանակի մասին, որոնք ոչ մի առնչութիւն չեն կարող ունենալ դատարան կոչված հակացողութեան հետ, որ օրինականութեան եւ արդարութեան մի ազնիւ ուղեցոյց է։ Դատարանը պարտաւոր է ամենքին եւ իւրաքանչիւրին օրինակ տալ մատչելիութեան եւ բարեացակամութեան, քաղաքավարութեան եւ սիրալիր վարմունքի, հանդարտութեան եւ կրքերի զսպման, չափաւորութեան եւ պատուարժանութեան։ Քրէական դատարանի, ինչպէս եւ առհասարակ ամեն մի դատարանի վերաբերմունքը դէպի հասարակութիւնը ամենից առաջ ծառայական է։ Դատարանը հաստատված է հասարակաց բարիքի համար, դատարանական պաշտօնեաները գործում են յոգուտ հասարակաց շահերի։ Օրէնքդրի կամքով դատաստանը կատարվում է ի լուր ամենքի, ամենքի աչքի առաջ։ Հասարակական գիտակցութեան անըմբռնելի մթնոլորտի մէջ դատարանը ենթարկվում է ազատ գնահատութեան եւ քննադատութեան։ Հասարակութիւնը կարող է հաւանութիւն տալ դատաստանական գործիչներին կամ չը հաւանել նրանց, կարող է համակրել նրանց կամ չը համակրել, բայց եւ այնպէս դատաստանական գործիչները պէտք է իրանց պարտքի ազնիւ կատարումը բարձր դասեն բոլոր անցաւորական հովերից։ Դատաստանական գործիչը չէ կարող թանգ չը գնահատել հասարակաց վստահութիւնը, թէպէտ եւ նրան ձեռք բերելու համար թոյլատրելի չէ դատաստանական գործունէութեան մէջ ամենափոքր թերացումն անգամ։ Քրէական գործերի քննութեան ժամանակ դատի հրապարակականութիւնը ընդհանուր հիմնական օրէնք է։ Իսկ դատարանի դռների փակումը—բացառիկ եւ արտակարգ միջոց։ Այսուամենայնիւ ամենայն աչալրջութեամբ պահպանված հրապարակականութիւնը ոչ մի դէպքում չը պէտք է կերպարանափոխվի եւ դառնայ անկարգ եւ դայթակղեցուցիչ տեսարան, որ բաւարարութիւն է տալիս միայն գատարկ հետաքրքրութեան կամ ամբոխի վնասակար ցանկութիւններին. ուստի նախագահողը եւ դատարանը պարտաւոր են արթուն հսկողութեամբ եւ եռանդով պաշտպանել կարգը նիստերի ժամանակ՝ վճռականապէս նրա խախտման առաջն առնելով եւ առանց քաշվելու կարգը խանգարողներին ենթարկելով օրինական ներգործման։ Այս պատճառով եւ դատարանը հիմք չունի տատանվելու դատաստանի հրապարակականութիւնը սահմանափակելու իրաւունքը գործադրելիս, երբ այդ հրապարակականութիւնը կարող է յայտնապէս վնասել պետական եւ հասարակական կեանքի հիմունքներին, որոնք աւելի գերազանց նշանակութիւն ունեն, քան դատարանի հրապարակական լինելը։ Այս եւ սրանց նման դէպքերում, որոնք համեմատաբար ամենեւին յաճախ չեն պատահում, չէ կարելի չը տեսնել, որ սահմանափակող կարգադրութիւնները, ինչպէս էլ վերաբերվեին նրանց չահ ունեցող անձինք, պաշտպանում են ոչ միայն արդարադատութեան կանոնաւոր ընթացքը, այլ եւ հասարակական խաղաղութիւնը։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Շատ վաղուց է մեզանում ներկայացումներ չեն լինում. այդ պատճառով գովելի է տեղիս թատերասէրների ամսոս 31-ին մի ներկայացում տալը։ Ներկայացնելու են «Դօքտոր Թաթոս» եւ «Մադօի կտակը», որի վերջը լինելու են ասիական պարեր։ Շատ ցանկալի է, որ տեղիս ազգաբնակութիւնը անտարբեր չը վերաբերվէր»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Քաղաքումս տարածված են մի քանի տարափոխիկ հիւանդութիւններ՝—ինֆլուէնցա, բկացաւ, տիֆ։ Ինֆլուէնցան այնքան տարածված է, որ համարեա ամեն տուն վարակված է այդ հիւանդութեամբ։ Եղանակը մեզանում տաք է եւ զուարճալի օրեր է անում»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ Ռափայէլ Պատկանեանի գերեզմանի վրա դրվելիք արձանը յանձնված է չինելու Պարիզից նոր վերադարձած երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանին։

—

«ԿԵՐՉԻՑ մեզ գրում են. «Թէպէտ դեկտեմբերը վերջանալու վրա է, բայց եւ այնպէս կարգին ցրտեր չեն սկսվել դեռ եւս. ամբողջ աշունը, մանաւանդ վերջը, անձրեւային էր եւ տաք, որ եւ շարունակվում է մինչեւ օրս։ Եղանակին են վերագրում, որ քաղաքիս մէջ սաստիկ տարածված էր ինֆլուէնցա եւ սկարլատին հիւանդութիւնները. վերջինս շատ զոհեր տարաւ երեխաներից. տարրական ուսումնարանները երկու ամիս փակ մնացին տարափոխիկ հիւանդութեան պատճառով։ Ծովը դեռ եւս չէ սառել, այնպէս որ շոգենաւեր ազատ երթեւեկում են»։

գրաւել ոսկորներով, ճիշդ այնպէս, ինչպէս ամեն մի կնոջը՝ զարդարանքներով։

Այս նկատողութիւնը յիշեցրեց ինձ հետս տանել որ եւ է զարդարանք գեղջկուհու համար եւ, առանց տատանվելու, արկղիցս հանեցի մի էժանագին արծաթեայ մատանի։ Հագայ գողերի սիրած գոյնի շորեր, այսինքն սեւ, կապեցի պարզ դաշոյնը եւ դուրս եկայ տանից։

—Միխա, ձայն տուի թիկնապահիս,—պատրաստ ես։

—Պատրաստ եմ, տէր իմ, խուրջինս լցրել եմ ոսկորներով ու հացով, կարող ես միամիտ կենալ։

Փորձառու մարդ էր Միխան, շատ վերաբերմամբ հիանալի խորհուրդներ տուեց ինձ։

Ահա եւ Դաւիթի բակը։ Գամփռը, որ պառկած էր տան շէմքից ոչ հեռու, ծանր ու բարակ գլուխը բարձրացրեց, աչքերը ուղղեց մեր կողմը եւ շատ ծոյլ կերպով, կարծես ակամայից, փոքր ինչ հաչեց։ Ծերունին շտապեց հայի կտոր նետել։ Շունը վերկացաւ իր տեղից, ծանրաքայլ մօտեցաւ հացին, մի ակնթարթում կուլ տուեց ու ապատողական դիրք ընդունեց, պոչը ժաժ տալով։ Միխան նորից նետեց աւելի խոշոր կտոր։ Շունը այդ էլ կերաւ եւ մի զարմացական հայեացք ձգեց մեզ վրա։ Դարձեալ մի պատառ հաց, եւ այսպէս իրար ետեւից սկսեցին տեղալ հացի ու ոսկորների կտորները։

Երբ գազանը բոլորովին կաշառված մօտեցաւ մեզ եւ սկսեց լուրջ կերպով գործ տեսնել տաւարի ոսկորների հետ ատամներով ու թաթերով, թիկնապահս շշնջաց, «դէ գնա»։ Զգոյշ քայլերով անցայ բակը, հասայ շէմքին ու կանգ առայ։

Տնակը բաղկացած էր մի ընդարձակ սրահից ու մի փոքրիկ սենեակից։ Երկուսն էլ անշուք ու կեղտոտ։ Դռները բաց էին եւ տեսայ ինչպէս սրահի կենտրոնում մեծ խարոյկ էր վառվում եւ շուրջը նստել էր ընտանիքը։ Բարուոք համարեցի պառկել կրծքիս վրա աննկատելի լինելու համար եւ սողալով անցնել փոքրիկ սենեակը։ Դռների մօտ կապած էր երկար թոկով մի մեծ ոչխար ոլորուն եղջիւրներով։ Նա հանգիստ պառկած որոճում էր եւ ուշք չը դարձրեց վրաս։

Զոքեցի, ձեռքերիս վրա հառնատվեցի եւ մեծ զգուշութեամբ սկսեցի չորեքոտ առաջանալ։ Ոչխարը, տեսնելով ինձ իր կողքին, վեր ցատկեց տեղից—վախեցաւ։

Մի րոպէ կանգ առայ զգուշութեան համար, որպէս զի չը խրտնեցնեմ անասունին։ Այդ էլ ինձ աջողվեց։ Դաւիթը միս էր կտրում խորովածի համար եւ խօսում էր բարկացած ձայնով։ Կինը համաձայն չէր մարդու հետ, բայց չը հասկացայ ինչ բանի մասին էր վէճը։

«Կնոջ մազը երկար եւ խելքը կարճ», արտասանեց գեղջուկը եւ մսի անպէտք կտորը շպրտեց իմ կողմը։ Նրա ետեւից դուրս վազեց կատուն եւ իր փայլող աչքերով ուշադրութեամբ դիտեց ինձ, վերցրեց կտորը ու հեռացաւ։

«Կատուն մատնիչ չէ», մտածեցի։ Դաւիթը իւղոտ ձեռքերը քսմեց իր տրեխներին ու վերկացաւ տեղից։ Ես երկիւղից բոլորովին չփոթվեցի, մի ակնթարթում հազար տեսակ մտքեր անցան գլխովս, բայց շուտով հանդարտվեցի։ Նա իր վրայից չուխան հանեց, ձգեց գետնին ու վրան նստեց։ Աղջիկը դուլպա էր գործում եւ խօսակցութեան չէր մասնակցում։ Կրակի լոյսը խաղում էր նրա կարմիր այտերի վրա.—շատ գեղեցիկ էր այդ վայրկեանին։

Դարձեալ մի րոպէ եւ ես պէտք է գտնվէի մութ սենեակում, ուր որոշել էի ծածկվել մի անկիւնում։ Ցոյս ունէի, որ գեղջկուհին որ եւ է բանի համար կը մտնի այնտեղ, եւ միակ ցանկութիւնս էլ այդ էր։

Միխան իր դերը աննման էր կատարում։ Ամեն ինչ կարգին էր, մնում էր ինձ մի քանի քայլ էլ փոխել եւ արդէն նպատակիս հասած պէտք է լինէի։ «Դէ առաջ», ասացի ինքս ինձ ու շարժվեցի տեղիցս։ Ոչխարը յետ քաշվեց, կարծես ճանապարհ էր ուզում ինձ տալ։ Բոլորովին ուշք չը դարձրի նրա վրա ու շարունակեցի ճանապարհս առաջվայ նման չորեքոտ։ Մնացել էր աննշան տարածութիւն, որպէս զի սենեակի մէջտեղ գտնվէի։ Ոչխարը շարունակում էր յետ-յետ քաշվել։ Վերջին քայլերս մի փոքր արագացնելուն պէս անասունը մի թռիչք գործեց, եւ սարսափելի հարուած իջաւ ճակատիս...

Ինչ պատահեց այնուհետեւ՝ չեմ յիշում։ Երբ ուշքի եկայ, պառկած էի մահճակալիս վրա եւ գլուխս պինդ կապած էր։ Ինձ շրջապատել էին բարեկամներս ու մերձաւորներս եւ տխուր դէմքերով նայում էին վրաս։ Կողքիս նստած էր քաղաքից եկած ծանօթ բժիշկը։ Կամաց կամաց սկսեցի մտաբերել երազի նման դրժբաղդ իրողութիւնը։ Խօսելու ոչ արտաքրտութիւն ունէի եւ ոչ կարողութիւն... Ինձ թւում էր, որ գլուխս երկու կէս է եղած ու նորից իրար կպցրած, ինչպէս կոտրած կուժ։

—

Փառք Աստուծու, առողջացայ։ Երբ առաջին անգամ կարող եղայ դուրս գալ պատշգամբը, մի քանի րոպէ ազատ շունչ քաշել, արդէն ձմեռ էր, շուրջը ծածկված էր ձիւնով։ Մաքուր ու ցուրտ օդը միտքս թարմացրեց եւ ընկայ մտածմունքների մէջ։

Ամուսնանալուս հարցը կատարելապէս խանգարված էր, ամբողջ գիւղի մէջ խայտառակված էի, նիւթական անագին վնաս էի ունեցել։ Բայց այս բոլորը ոչինչ էի համարում, երբ մտաբերում էի ճակատս, որը երկու տեղից ճղված էր։

Ցմահ դատապարտված էի անջնջելի ու ամօթալի նշանը կրելու։ Այս տեսակ մտատանջութիւնը պաշարել էր ինձ ու մաշում էր սիրտս, երբ նկատեցի երեխաների մի մեծ խումբ, որ աղմուկ բարձրացնելով անցնում էր տանս առջեւ։

Նրանց առաջնորդում էր Վասօն, ոխերիմ թշնամիս եւ իր ետեւից քարշ տալիս ոչխարին։ Եղջիւրները ոսկեզօծել էր, մորթին ծածկել էր վարդագոյն բծերով ու վզից կապել զանգակիկներ։ Դա իր յաղթանակի նշան էր եւ ինձ խայտառակելու միջոց։

Միմիայն գաւառացի ազնուականը կը հասկանայ, թէ ինչ ցաւ է ինձ համար պատժված լինել այս ասիճան մուրտաբ կերպով։

Գ. Բաշինջաղեան

Պարիզ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«N. Wien. Journal» լրագիրը հաւատացնում է, որ աւստրիական կառավարութիւնը այն դէպքում, եթէ պետական սէյմը նորից անընդունակ դուրս գայ արդիւնաւէտ գործունէութեան, կը փորձէ կառավարել երկիրը միայն վերին պալատի օգնութեամբ։ Այդ պալատը անդամներ բարձրն Գելֆերտ, քրէական իրաւունքի պրոֆէսսոր Լամմաշ եւ պետական սէյմի պատգամաւոր Մէնգներ հաստատում են այս տեղեկութեան ճշդութիւնը. մի եւ նոյն ժամանակ Լամմաշ գրում է յիշված լրագրում, որ սկզբնական բանակցութիւնները վերին պալատի հետ արդէն սկսված են եւ նրա առաջին նիստերից մէկում նախագիծը կենթարկվի քննադատութեան։

—Նոր դարը հէնց իր առաջին օրվանից մի նշանաւոր հետք կը թողնի Անգլիայի պատմութեան մէջ՝ խլելով նրանից, թէպէտ եւ նրա համաձայնութեամբ, բայց անշուշտ հանդամանքների ճնշման տակ տուած համաձայնութեամբ, նրա ամենախոշոր գաղթականութիւններից մէկը։ 1901 թուի յունվարի 1-ից, (ն. տ.) Մեծ-Բրիտանիայի աւստրալիական գաղթականութիւնները կազմեցին մի ինքնուրոյն հանրապետութիւն։ Եթէ հաշուելու չը լինենք նոր նահանգապետ լորդ Գոպտոունին, որ ապրում է Սիդնէյի իր գեղեցիկ պալատում եւ ստանում է նոր հանրապետութիւնից տարեկան 10,000 ֆ. ստերլինգ ռոճիկ, մայր-երկրի եւ նրա նախկին գաղթականութիւնների մէջ չը մնաց ոչ մի քաղաքական կապ։ Նոր հանրապետութեան երկիրը իր տարածութեամբ հաւասար է համարեա ամբողջ Եւրոպային։ Ուղիղ է, նրա ազգաբնակութիւնը շատ չէ, բայց պէտք է յիշել, որ Միացեալ-Նահանգներն եւս, երբ հրատարակեցին իրանց անկախութիւնը, ընդամենը 2 միլիոն ժողովուրդ ունէին։ Աւստրալիական հանրապետութիւնը այժմ կունենայ իր պարլամէնտը, որ բաղկացած կը լինի սենատից՝ 36 անդամներով—վեց-վեց մարդ իւրաքանչիւր շտատից—եւ պատգամաւորների ժողովից։ Նա կունենայ իր կառավարութիւնը, որ ազատօրէն կընտրվի պարլամենտական մեծամասնութիւնից։ Նա ինքը կը հոգայ իր երկրի պաշտպանութեան հոգսը. իր ցանկութեամբ կը սկսէ աւելացնել կամ պակասեցնել մաքսային տուրքերը, կը հրատարակէ իր համար օրէնքներ, համարեա առանց որ եւ է սահմանափակման, կը նշանակէ եւ կը հաւաքէ հարկեր, կընտրէ իր համար մայրաքաղաք, որ դեռ եւս չէ ընտրված, բայց որ երեւի կը լինի Մէլբուրն։ Զարմանալի չէ, որ արդէն այժմանից այս նոր հանրապետութիւնը համեմատում են Միացեալ-Նահանգների հետ, մանաւանդ որ նրա սահմանադրութիւնը ամերիկեանի ճշգրիտ պատճէնն է։—Հանրապետութեան բացումը արդէն տեղի ունեցաւ Սիդնէյում յունվարի 1-ին. նա սկսվեց լորդ Գոպտոունի երդմամբ հաւատարիմ վնելու աւստրալիական հանրապետական սահմանադրութեանը։ Սիդնէյի ազգաբնակութեան ուրախութիւնը անսահման էր։ Քաղաքը ամբողջովին զարդարված էր։ Թափորը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ բոլոր աւստրալիական շտատներից, Անգլիայից, Նոյնպէս եւ անգլիական գաղթականութիւններից, բռնել էր երկու մղոն տարածութիւն. մի ժամից աւելի հարկաւոր եղաւ, որ նա տեղ հասնէր։ Լորդ Գոպտոունից յետոյ երդումն տուին նոր մինիստրութեան անդամները՝ իրանց գլուխ ունենալով առաջին-մինիստր Բարտոնին։ Հանդէսի ժամանակ ստացվեցին շնորհաւորական հեռագիրներ Վիկտորիա թագուհուց եւ անգլիական կառավարութիւնից յանուն հանրապետական կառավարութեան։

—Լոնդոնում հեռագիր է ստացված Պեկինից, որ հաղորդում է, թէ Մուկդէնում ծովապետ Ալէքսէեվ եւ չինական կառավարութեան լիազօրները ստորագրեցին մի դաշնագիր, որով Ֆէն-Տէնի նահանգը վերադարձնվում է Զինաստանին, բայց մնում է ռուսաց խնամակալութեան տակ։ Այս պատճառով Ռուսաստանը կը նշանակէ մինիստր-ռէզիդենտ, որ բնակութիւն կը հաստատէ Մուկդէնում եւ Բուխարայի ռէզիդենտի նման՝ կունենայ երկրի վարչութեան վրա։

—«Нов. Время» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է. «Կ. Պոլսի միջազգային սանիտարական խորհրդի եւ սուլթանի մէջ վէճ է սկսվել։ Այդ սանիտարական խորհուրդը, որ հիմնել է քառասնական թուականներին սուլթան Մահմուդը Ֆրանսիայի եւ Անգլիայի պահանջով, երբ ժանտախտը տարածվել էր այնտեղ, բաղկացած է 13 օտարահպատակ պատուիրակ-բժիշկներից եւ ութը Թիւրքերից։ Այդ խորհուրդն նախագահում է արտաքին գործերի մինիստրը։ Խորհրդի նպատակն է—պաշտպանել Թիւրքիան ժանտախտից, խոլերայից եւ դեղին տենդից։ Խորհուրդը վարչական մեծ կազմ ունի Թիւրքիայում եւ իր սանիտարական գործակալներն ունի Պարսկաստանում եւ Եգիպտոսում։ Այդ խորհրդի որոշումները տարափոխիկ հիւանդութեան ժամանակ պարտաւորական են Բ. Դրան եւ օտար միսսիաների համար։ Բ. Դրան եւ օտարահպատակ միսսիաների միջեւ կայացած համաձայնութեան հիման վրա խորհուրդը մշտական եկամուտ է ստանում սանիտարական տակսայից, որ առնվում է Թիւրքաց նաւահանգիստներում կանգ առնող բոլոր նաւերից։ Բաղդաւորապէս խորհրդի ֆինանսական մասը գտնվում է օտարահպատակ պատուիրակների հսկողութեան տակ, եւ խորհուրդն արդէն բաւական պահեստի գումար ունի, որ պահվում է արտասահմանեան բանկերում։ Ահա այդ դրամագլուխն է, որ հանգիստ չէ տալիս Թիւրքաց փաշաներին։ Բ. Դուռը ամեն տեսակ արգելքներ է յարուցանում խորհրդի որոշած միջոցների իրագործման դէմ, եւ առհասարակ աշխատում է ամեն կերպ նեղութիւն պատճառել խորհրդին, ակնարկելով անդադար, թէ խորհրդի դրամագլուխը պէտք է գտնվի Թիւրքաց հովանաւորութեան տակ։ Եթէ խորհուրդը զիջէր եւ իր դրամական գործերը կարգադրէր Թիւրքերի ցանկութեամբ, այսօր կամ վաղը ժանտախտը կամ ուրիշ հիւանդութիւններ անյապաղ կերեւային Թիւրքիայում, եւ այնտեղից էլ Ռուսաստանի վրայով կը տարածվէին Եւրոպա»։

—Սուլթանը մի նոր միսսիա է ուղարկում Զինաստան, Էնվէր փաշայի գլխաւորութեամբ։ Միսսիան բաղկացած է չորս անդամներից։ Նրա նպատակն է—ինչպէս հաղորդում են գերմանական լրագիրները—յայտնել Զինաստանի մահմեդականներին սուլթանի՝ որպէս խալիֆի դէպի նրանց ունեցած բարեհաճութիւնը։

—Բերլինից «Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Հարաւային Աֆրիկայից ստացված վերջին տեղեկութիւնները դրդում են այստեղի քաղաքական շրջաններին, որոնք սկզբում սկեպտիկաբար էին վերաբերվում բօէրների ներս խուժման կապլանդիա, կրիտիկական համարել այժմ Անգլիայի դրութիւնը։ Եթէ Անգլիան չը կարողանայ պատերազմի բեմն ուղարկել նորից հարիւր հազար զինուորներ, պատերազմը կարող է անվերջ շարունակվել։ «Nat. Zeitung» լրագիրը կարծում է, որ Անգլիան այժմ տրամադիր կը լինի խաղաղութիւն աւելի թեթեւ պայմաններ առաջարկել»։

—«Русск. Вѣд.» լրագրի Բերլինի թղթակիցը հեռագրում է. «Մարտափը Լոնդոնի բօրսայում առաջ բերեց արժէթղթերի սաստիկ անկումը եւ Բերլինի բօրսայի վրա։ Անգլիական սնանկացած «Clob Company» ընկերութիւնը, որի գլուխ է կանգնած Հնդկաստանի նախկին փոխարքայ լորդ Դիւֆէրին, 40 միլիոն մարկ դրամագլուխ ունէր։ Երէկ Լոնդոնի բօրսան սնանկացած յայտարարեց 29 յայտնի առեւտրական ֆիրմաներ»։

—Անգլիական լրագիրների խօսքով, «Daily News» լրագրի խմբագրութիւնը փետրվարի 1-ից (ն. տ.) անցնում է ուրիշ անձանց ձեռքը եւ դրա հետ միասին արմատականապէս կը փոխվի լրագրի ուղղութիւնը—իմպէրիալիստական օրգանից նա կրկին դառնում է դիմադրական եւ հակաիմպէրիալիստական։ Լրագրի սեփականատէրերը՝ Օպպենհէյմ եւ Արնօլդ Մորլէյ ծախեցին իրանց փայերը, խմբագիր Կուկ հեռանում է, եւ խմբագրութիւնն են մտնում մի քանի անձինք, «Daily Chronicle» լրագրի նախկին աշխատակիցներից, որոնք հեռացան անցեալ տարի այդ խմբագրութիւնից, երբ նա բօէրների դէմ պատերազմի պաշտպան հանդիսացաւ։ Խմբագրութեան կազմի փոփոխութեան պատճառը բաժանորդագրութեան անկումն էր այն ժամանակից, երբ «Daily News» լրագիրը իմպէրիալիստական քաղաքականութեան կողմն անցաւ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Կատարված իրողութիւն է։

Այլ եւս չը կայ Աւետիք Արասխանեանցի «Մուրճը» եւ առաջիկայ յունվարից պէտք է սկսվի հրատարակվել նոր չրջանի «Մուրճը»։

Կայ Հին-Բայազէտ եւ Նոր-Բայազէտ, կայ Հին-Զուղայ եւ Նոր-Զուղայ, կայ Հին-Նախիջեւան եւ Նոր-Նախիջեւան, կայ Հին-Շէն եւ Նորաշէն...

Թող տարբերութեան համար ես էլ այսօր գործ ածեմ Հին-Մուրճ եւ Նոր-Մուրճ անունները։

Թէ ինչ կը լինի Նոր-Մուրճը՝ այդ ապագան ցոյց կը տայ։ Նա յուսալի եղանակով է գործ սկսում։ Բարեմաղթենք եւ սպասենք։

Բայց հետաքրքրական է մի փոքր հաշիւ տեսնել Հին-Մուրճի հետ։

Նա կատարելապէս անաջողութեան հանդիպեց եւ մնանկ հանդիսացաւ։

Իբրեւ գրական չաջողված գործի մի դէպք դա տխուր երեւոյթ է. բայց իբրեւ որոշ պատճառների հետեւանք՝ նա բնական էր, լոգիկական եւ անխուսափելի։

Այդպիսի հետեւանք սպասվում էր եւ տեղի ունեցաւ։

Ինչու՞ էր անաջող։

—Մինթէ Արասխանեանցը չէր սիրում իր «Մուրճը» եւ գլուխ չէր կոտրում նրա համար, կը հարցնէք դուք։

—Ի՞նչպէս չէր սիրում։ Սիրում էր, սիրում եւ իր սեփական խելքով չատ էր սիրում նրան։ Քանի անգամ, ասում են, նա գրկած «Մուրճի» համարները՝ բացագանչում էր Վերին-Ագուլիսի բնորոշ ոճով՝ «Իս կնեծըմ ամ «Մուրճը»։

«Իս կնեծըմ ամ «Մուրճը»—նշանակում է բառ առ բառ՝ ես կնել եմ իմ «Մուրճը», այսինքն թէ ես սիրում եմ իմ Մուրճը։

Բայց իսկապէս չատ սիրելուց կնել էր եւ կնում էր նա իր «Մուրճը» մինչեւ որ արիւնաքամ արեց նրան։

—Մինթէ չեն եղել «Հին-Մուրճի» մէջ բաւարար յօդուածներ, կը հարցնէք դուք։

Եղել են, կը պատասխանեմ ես։

—Մինթէ չեն եղել այնտեղ աշխատակցելու պատրաստ անձինք։

Եղել են։

—Մինթէ անկեղծ աշխատողներ չեն փորձել այնտեղ դրելու։

Եղել են։

Այո եղել են եւ հէնց այն պատճառով, որ եղել են, այո, հէնց այդ պատճառով, աւելի ցաւալի, աւելի սրտաճմլիկ, աւելի ծանր է այդ գրական անաջողութիւնը։

Այժմ երբ տխուր փաստը տեղի է ունեցել եւ մնանկութիւնը ակներեւ է, մնում է... մընում է խրատական դասեր վերցնել եղած փորձից։

Երբ Աւետիք Արասխանեանցը ձեռնարկում էր ամսագրի հրատարակութեանը՝ նա իրան մենակ չէր զգում։

Եւ կարող էր մենակ չը զգալ։ Հասարակութեան մի մասի մէջ լսվում էին երկար ու բարակ զրոյցներ ամսագրի անհրաժեշտութեան մասին։ Ամսագիր հարկաւոր էր, ամսագրի պահանջ կար, ամսագրին վերապահված էր մի որոշ դեր։

Այդ ազդեցութեան տակ Արասխանեանցը գրեց իր ամսագրի առաջին համարում։

«Որպէս առհասարակ ամսագիր—«Մուրճը» չէ կպչում հայ հասարակութեան շինքին,—ինքը հասարակութիւնը իւր վրի վերայ է առնում նորան։ Ամեն խօսակցութիւն, որ եղած է «Մուրճ»-ի հրատարակելուց եւ մինչեւ իսկ հրատարակման թոյլտուութիւնը խնդրելուց առաջ—մեզ համոզում են այդ բանի մէջ եւ հաւատ թէ մեր մէջ գտնուին կասկածողներ այդ նկատմամբ։ Մենք գալիս ենք իւր ժամանակին—այդ անկասկած է։ Այդ հանգամանքը ամսագրի հրատարակչի գործը չատ թեթեւացնում է եւ նորա դրութիւնն իսկ դարձնում է ախորժելի, նախանձելի անգամ, եթէ ի նկատի առնենք, որ չատ հրատարակութիւններ, նմանապէս օգտակար, անգամ, այո, չատ կարեւոր մտածող մարդկանց աչքում, ստիպված են եղած դեռ եւս ճանապարհ հարթել իրանց համար, դեռ եւս տարիներով չարունակող յառաջաբանների են կարօտ եղած՝ իրանց օգտակարութիւնը եւ կարեւորութիւնը ապացուցելու եւ հասարակութիւնից ընդունել տալու համար։ Խոստովանում ենք, երեքկին խոստովանում ենք մեր դրութեան աջողակութիւնը. անկոչ հիւր չենք մենք, այլ կոչված»։

Տեսէք, ինչ նպաստաւոր տրամադրութիւն է եղել Հին-Մուրճի չուրջը նրա աշխարհ գալու ժամանակ։ Դա ինքը Արասխանեանցն է ասում, բայց՝

Բայց ամսագրի հէնց այդ առաջին համարում երեւան եկան եւ ապագայում զարգացան Արասխանեանցի այն դժբաղդ ու ինքնասպան յատկութիւնները, որոնք կործանեցին վերջ ի վերջոյ այդ վաղուց սպասված «ըղձացած հիւրը—«Մուրճը»։

Արասխանեանցը տարօրինակ սիրով էր սիրում իր «Մուրճը»։

«Իս կնեծըմ ամ «Մուռճը»։

Ամսագրի անկեղծ բարեկամների խումբը երկու երեք տարի տիտանական փորձեր արեց մաքառելու այն քայքայող եւ մաշող յատկութիւնների դէմ, որոնք կապված էին «Մուրճի» խմբագրի անձնաւորութեան հետ։

Մաքառումը սրտամաշ էր։ Ցաճախ տիրում էր վհատութիւն, բայց չարունակվում էր ապագայի յոյսով։

Եւ կար մի բան, որ կարծես հասարակութիւնը ուզում էր հաւատ ստանալ դէպի ամսագիրը։ Բնորոշ է այն, որ այդ հաւատը ուժեղանում էր, երբ ամսագրի մէջ թոյլ կերպով էր «արտայայտվում» ինքը Արասխանեանցը, եւ թուլանում էր, երբ նրա արտայայտումը ուժեղանում էր։ Թէեւ ամսագիրը կարդի չէր ընկնում եւ նրա մէջ երբեմնապէս դուրս էին ցցվում ականջները, բայց եւ այնպէս մի նշոյլ կարծես նկատվում էր։

Սակայն անխորտակելի էր նշանաբանը՝ «իս կնեծըմ ամ Մուրճը»։ Եւ այդ սէրը, որ թելադրում է կծոտել եւ արիւնլուայ անել «Մուրճը»՝ յուսահատեցրեց բոլորին։

Վերջապէս մի գեղեցիկ օր տիտանական փորձերի հեղինակները տեսան, որ փրկել ամսագիրը նրա խմբագրի կծելուց անկարելի է, թողին ու հեռացան։

Փորձեր արին եւ ուրիշները։

Բոլորն անաջող։

«Հին-Մուրճը» իր ծնվելուց յետոյ ներկայացաւ իբրեւ հիւանդոտ անդամալոյծ, բախտիզմով տկար մի երեխայ։

Եկան բժիշկներ, չատ ջանք գործ դրեցին առողջացնելու, բայց իզուր։

Հաղիւ լաւացնում էին աչքերը, մէկ էլ տեսնում էին, որ երեխայի ականջներն են խլացել։ Սկսում էին բժշկել լսողութիւնը, մէկ էլ տեսնում էին, որ խանգարվել է սննդառութիւնը։ Բժշկում էին ստամոքսը, յանկարծ կծկվում էին ձեռք ու ոտքերը։ Սկսում էին դրանց բժշկել՝ դարձեալ կուրանում էին աչքերը։

Եւ այդպէս անվերջ։

Այն կաթը, որ Արասխանեանցն էր տալիս իր «Մուրճին», թունաւոր էր եւ վնասակար։ Իսկ նա ոչ միայն չէր ուզում կասկածել այդ կաթի թունաւոր լինելու մասին, այլ կրկնում էր՝ «Թող կամ այդ կաթը լինի, կամ իսկի չը լինի «Մուրճը»։

Սակայն, ինչպէս յայտնի է, ներկայ 1900 թուին այդ ձեւակերպութիւնը փոխվեց։

Սիրված, ըղձացած, «կնեծըմ» «Մուրճը» յանձնվեց ուրիշներին փողի գնով։ Նա ծախվեց։

«Հին-Մուրճի» առաջին թշնամին Արասխանեանցն էր։ Յետագայ տարիներում այդ թշնամութեան պաշտօնը ստանձնեցին եւ մի երկու գրական մանկլաւիկներ, որոնք արժանացել էին Արասխանեանցի գովասանքներին «Մուրճի» մէջ։

«Հին-Մուրճը» չարունակվում էր հրատարակվել, հարկաւոր չը լինելով ոչ ոքի։

Փայտեայ ձի տեսել էք։

Արասխանեանը ներկայանում էր իբրեւ մի այնպիսի ձիաւոր, որ հեծել է փայտեայ ձի եւ վազում է լուրջ դէմք ընդունած։ Նա աղաղակում է ճանապարհին պատահողներին «խաբարդա, խաբարդա»։ Սակայն այդ աղաղակը տպաւորութիւն չէ գործում։ Մարդիկ վաղուց սովորել են այդ աղաղակին։ Ոչ ոք տեղից չէր շարժվում, լաւ գիտենալով թէ ինչ է ձին եւ ով է հեծնողը։

«Հին-Մուրճը» իբրեւ անկենդան մի բան, սառեց։ Նա սառցարան էր ամեն մի բեղմնաւոր մտքի եւ ստեղծագործող ոգու համար։ Թարմ բողբոջները, երբ ընկնում էին «Հին-Մուրճի» աւազանը, թառամում էին եւ թօշնում։

«Մուրճը» դարձաւ մի ձեւական հրատարակութիւն, անկապ յօդուածների մի ժողովածու, մի խօսքով հրատարակութիւն, որի գլխաւոր արժանաւորութիւնն այն էր, թէ նա քանի էջ ունի, քանի տող, քանի հատոր։

Արասխանեանը մի գլուխ թելադրում էր ընթերցողին գովասանք «Մուրճի» վերաբերութեամբ։ Ամեն օր ընթերցողի աչքն էր կոխում «Մուրճի» ամեն մի տողը։

«Մուրճ» ստացողը ստիպված էր կարդալու մերձաւորապէս այսպիսի տողեր.

«Մուրճի այս համարը ամենամեծն է մինչեւ այժմ հրատարակվածներից։ Նա չուրջ այսքան ու այսքան երես է»։

«Մուրճի ներկայ համարում տպվում է NN-ի վէպը, որ իր համահաւասարը չէ ունեցել մեր գրականութեան մէջ»։

«Մուրճի այս ինչ յօդուածը մի բոլորովին նոր ուսումնասիրութիւն է, որ առաջինն է ոչ միայն հայերի, այլ ամբողջ կովկասեան մամուլի մէջ» եւ այլն եւ այլն։

Հասկանալի է, որ երբ «Հին-Մուրճը» դադարեց, հասարակութիւնը ոչ մի ցաւ չը զգաց, ոչ մի կորուստի գաղափար չունեցաւ։

Հին-Մուրճը զոհ դարձաւ նրա խմբագրի անշնորհքութեան։ Լինելով անչափ եսամոլ, նեղսիրտ փառաբեր, ինքնագով, մեծամիտ, նա չէր կարողանում խմբել իր չուրջը գործող եւ մտածող մարդկանց։ Արտաքին լրջութեան եւ չիտակութեան տակ ծածկված էին դատարկութիւն եւ փարիսեցիութիւն։ Եւ միայն մի յատկութիւն հիացնում էր չատերին, դա նրա յամառութիւնն էր, որ արժանի էր աւելի լաւ ջանքերի, մի յամառութիւն, որ սակայն բոլորովին անսպասելի, անլոգիկական վախճան ունեցաւ։

«Մուրճը» երբ պատրաստվում էր աշխարհ տեսնել, արդարեւ կոչում ունենալու կարելիութեան մէջ էր։ Աշխարհ երեւալով՝ նա ստանակոխ արեց սպասվող կոչումը։ Հասարակական եւ գրական պահանջները գտան իրանց համար արտայայտութիւն։ Իսկ «Մուրճը» մնաց հոսանքից եւ կեանքից դուրս։

«Մուրճին» մօտենում էին մի քանի գրագէտներ իբրեւ մի հիւրանոցի՝ այնտեղ օթեւան գտնելու, բայց եւ իբրեւ հիւրանոցից չուտով թողնում-փախչում էին, որովհետեւ չէին զգում այնտեղ ոչ լոյս, ոչ ջերմութիւն, ոչ խրնամք եւ ոչ մի հոգատարութիւն։

Ինչ դաւանանքի էր նա ծառայում։

Ի՞նչ «մասարի» տէր էր նա։

Վրթին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

28 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 27-ին եւ 28-ին Գատչինոյի պալատում, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի ներկայութեամբ, վառվեցին ծննդեան տօնածառեր օֆիցերների եւ զինուորների համար։

ՄՕՍԿՎԱ։ Այսօր բացվեց վիրաբոյժների համաժողովը. մասնակցում են 220 մարդ. նախագահում է Սկլիֆասովսկի։

Այսօր անցաւ դէպի Ցարիցին սանիտարական բաժինը պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկու հետ։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենների հեռագիրը Պրետորիայից ասում է, թէ բօէրները յարձակումն գործեցին միաժամանակ բոլոր բրիտանական պահակակէտերի վրա Բելֆաստում, Բոոդերֆոնտէնում, Նէյդզէդախտում, Վիլդֆոնտէնում եւ Պանում սաստիկ ժառախուղի ժամանակ, գիշերը։ Ծանր կռիւ յետոյ բօէրները յետ մղվեցան։

ցին։ Անգլիացիների կորուստները—սպանված են 21 մարդ, որոնց թւում եւ մի կապիտան, վիրաւորված են 62 մարդ, որոնց թւում եւ երեք օֆիցեր։ Բոէրները թողին պատերազմի դաշտում 24 սպանվածներ։ Ապա հաղորդվում է, թէ բրիտանական սայլախումբը երէկ ենթարկվեց Բէյրայի զօրաբաժնի յարձակման Կրիւգէրսդորպի հիւսիսակողմում։ Անգլիացիների կողմից վիրաւորված են 4 հոգի։

ԼՕՆԴՕՆ։ Պիկէտբէրգդորդից ստացված է հետեւեալ հեռագիրը. «Անգլիական զօրքերը բռնել են լեռնային անցքերը. նրանք զօրեղ դիմադրութիւն ցոյց կը տան բոէրներին, որոնք երկու զօրաբաժիններով մօտենում են Կլան-Վիլեամ եւ Վօրչեստրի կամ Պիկէտբէրգի վրայով։ Երկրում ապրող հոլանդացիները հանգիստ են»։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Այն հոլոում, որ անցնում է Կապշտադտի առաջով, Տէլաբէյի եւ Ֆալսբէյի մէջտեղում, կառուցվում են ամրութիւններ։

ԳՐԱՖՐԷՑՆԷՏ։ Գնդապետ Գրէնֆէլ հետամուտ է լինում բոէրներին լեռնային դժուարանցանելի տեղերում. նրա հետախուզող զօրախմբերը այսօր անակնկալ կերպով հանդիպեցին բոէրների, որոնք սակայն անյայտացան աւելի վաղ, քան կարող էին մօտենալ բրիտանական զօրքերը։

ՐԻՇՄՕՆԴ։ Հինգ մարդուց բաղկացած մի պահակախումբ գերի առնվեց բոէրներից։ 40 հոգի սկսեցին հալածել բոէրներին. երկու բոէր սպանված են, որոնցից մէկը զօրաբաժնի գլխաւորն էր. մէկը վիրաւորված է. բռնված են 11 ձիեր։

29 դեկտեմբերի

Կ. ՊՕԼԻՍ։ Ժամանակից երէկ վախճանված մարդը դուրս եկաւ քառասուն տարեկան մի նաւավար, որ հիւանդացել է մի շաբաթ առաջ եւ զետեղված էր բժշկական աշակերտների հիւանդանոցում՝ Ստամբօլում։

ՊԵԿԻՆ։ Սինանֆուից եկած մի չինացի հաղորդում է, թէ քաղաքի մէջ գտնվում են 85,000 մարդուց բաղկացած չինական զօրքեր, որոնց մեծ մասը զինուորված է նոր տեսակի հրացաններով։ Այնտեղի ազգաբնակութեան տրամադրութիւնը օտարերկրացիների վերաբերմամբ հանում է կատաղութեան աստիճանի։ Համոզումն կայ, թէ չինացիները կարող են յաղթել դաշնակից զօրքերին ճակատ առ ճակատ տուած կռիւի մէջ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Պրետորիայի շրջակայքում, արեւելեան մարտկոցի մօտ, երէկ երեւաց բոէրների մի փոքրիկ զօրաբաժին, որ եւ երէկ քշեց—տարաւ չատ անասուններ։

ԿԱՊՇՏԱԴՏ։ 5,000 բոէրներ, որոնց մասին մի շաբաթ առաջ լսվում էր, թէ նրանք գընում են դէպի գերմանական սահմանը, չեղեցին իրանց ճանապարհը դէպի հարաւ։ այժմ նրանք մտան Կապի գաղթականութեան սրտի մէջ։ Ենթադրում են, որ այդ բոէրները գերի վերցրին մի քանի փոքրիկ բերդապահ խմբեր, որոնք բաղկացած էին Կապի կամաւորներից։

ԲԵՐԼԻՆ։ Ռէյխստագը բիւդժէտային յանձնաժողովին յանձնեց մի որոշում, որի համաձայն ապագայ առեւտրական դաշնագրի մէջ Ռուսաստանի հետ ռուսական այն հացի սակագները, որը ուղարկվում է դէպի պրուսական եւ օստդէյական նաւահանդիստները այնտեղից ծովով արտահանելու համար, յարմարեցրած լինեն այն սակագներին, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանում Լիբաւա եւ Ռիգա ուղարկվող ու այնտեղից ծովով արտահանվող ցորենի համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կառավարութիւնը յետ վերցրեց՝ վարձատրութեան եւ առեւտրական դաշնագիրների վերաբերեալ քննութիւնները Պեկինից փոխադրելու առաջարկութիւնը, որովհետեւ մի քանի պետութիւններ անհամակրութեամբ են վերաբերվում դրան, իսկ միւսները տատանվում են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ
ընթերցանութեան ձեռնարկ կրտսեր դասարանների համար, համառօտ բառգրքով։
Կազմեցին Կ. Կուսիկեանց եւ Լ. Սարգսեանց, ուսուցիչներ Լազարեան ճեմարանի։
ԳԻՆԸ 70 ԿՈՊԵԿ
Վաճառվում է Թիֆլիսի Կենտրօնական գրավաճառանոցում։ 9—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. Գրօսասեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. հաւասարները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիսեանի—տաքը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՄԵՂՐ
Վաճառվում է 25 կ. ֆունտը, Ց. Մէլիք-Բախտամեանի խանութում, Սօլոլակի փողոց, № 6։
6—6

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
„ՆԱՄՈՒՍ“
վէպը II տպագրութեամբ լոյս կը տեսնի յունվարի վերջին։ Դիմել Баку Александру Абелянцу. Գինը ճանապարհածախսով 1 բուբլի։
Գրավաճառներին զիջում։ 3—10

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԱԻԵՐՈՒՄԸ
18 տեսակ տեսարաններ մեծադիր թերթի վրա լուսատիպ պատկերը եւ չատ շուտով լոյս կը տեսնի Խորէն եպ. Ստեփանէի պատկերը նոյնպէս լուսատիպ. երկու պատկերները միասին ճանապարհածախսով 1 բ. 50 կ. վաճառվում են եւ Բաֆֆու եւ Պատկանեանի մեծադիր պատկերները, որ միասին արժեն ճանապարհածախսով 1 բուբլի։
Ամեն մէկը առանձին արժէ 1 բուբլի։
Դիմել՝ Баку. Андріасу Авакову. 1—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. և 1 բ. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մաղերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Մատակարարվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Մէրքայլեան կամուրջի վրա, Գապօվի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
34—100

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒԹԻՒՆ
Ա. ՍԱՐԳՍԵԱՆ
Գրավաճառանոցում գտնվում է հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, հոլանդերեն, դանիերեն, սուեդերեն, նորվեգերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսերեն, թուրքերեն, հայերեն գրքերի մեծ պաշար։ Գրքերի գնացուցակներ ուղարկվում են անվճար։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։
Գրավաճառանոցը գտնվում է Թիֆլիսում, Գրիբոյեդովի փողոց, № 1։
1—3

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒԹԻՒՆ
Ա. ՍԱՐԳՍԵԱՆ
Գրավաճառանոցում գտնվում է հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, հոլանդերեն, դանիերեն, սուեդերեն, նորվեգերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսերեն, թուրքերեն, հայերեն գրքերի մեծ պաշար։ Գրքերի գնացուցակներ ուղարկվում են անվճար։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։ Գրքերի գնումներ կատարվում են ամենայն լեզուներով։
Գրավաճառանոցը գտնվում է Թիֆլիսում, Գրիբոյեդովի փողոց, № 1։
1—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1901 годъ
на издающійся въ Тифлисѣ политическую и литературную ежедневную газету
НОВОЕ ОБОЗРѢНІЕ
(XVIII годъ изданія)
Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.
Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ чтеніи, ФОРМАТЪ газеты съ конца нынѣшняго года будетъ УВЕЛИЧЕНЪ.
Условія подписки
Съ доставкой и пересылкой:
На 12 мѣсяцевъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р.
За границу: на годъ 17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р.
Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., на полгода—4 р.
Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа каждаго мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул., д. № 8.
Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться подписчикамъ „Нов. Об.“ съ уступкою 50%.
1—3

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ
Ա. ՆԴՐԷԱՍ ՏԷՐ-ՄԱՐՈՒՔԵԱՆ
վերադառնալով արտասահմանից,
ընդունում է պատուէրներ Երեւանում
իր արհեստանոցում։ Հասցէն՝ Эривань, А. М. Теръ-Марукяну.
(չ.) 1—3

Ա. Ն. ՄԻԼՕՎԻ ԵՒ Ա. Ն. ԹԱՅԻՐՕՎԻ
Նաւթարդիւնաբերական եւ Առեւտրական Ընկերութեան
Հիմնարկողները պատիւ ունեն խնդրել պ.պ. բաժնէտէրերին (ակցիոներներին) չնորհ բերել Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովին, որ տեղի կունենայ 1901 թւի յունվարի 14-ին, կիրակի. 12 ժամին (կէսօրին), Թիֆլիսում, Լօրիս-Մէլիքովսկայա փողոց, տուն № 6 Զուբալովի, հիմնարկողների գրասենեակում։ Գործերն են. Ընկերութեան վարչութեան անդամների ընտրութիւնը եւ վճիռներ տալը այլ եւ այլ խնդիրների մասին Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան համաձայն։
2—3 Հիմնարկողներ՝ Ալէքսանդր Միլով, Ալէքսանդր Թայիրով

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԵՑՆԵԼՈՒ
ՀԻՍԻՍԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
Բաց է ամեն օր առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 12։ Իսկ երեկոյեան ժամի 5-ից մինչեւ 7-ը։ Նիկոլաեվսկայա փողոց, № 70, տելեֆոն № 567։
1—5 Գործակալ ԱԼԷՔՍԷՅ ԳՐԻԳԵՐԵՎԻՉ ՄՆԵՃԿՕՎ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօթ։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 3/16 յունվարի—շոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղերական գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 21։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. չ.) 13—20

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Ջեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՌԻՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է
Երկու տարի անձամբ՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխատորերով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թւի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, Կ Ո Ի Կ Ի Ա. Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յարմարի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 բ. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (Ե. Հ. չ) 16—20

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Декабря 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.